ՆՈՐ-ԴԱՐ

№ 126 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 13 Օգոստոսի **1891** Երեքշաբթի 13 Օգոստոսի ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 126

Տարեկան 10 բուբլի, վեց ամսով՝ 6 բուբլի, երեք ամսով՝ 3 բ. 50 կ.
ամսով 1 բ., Հատուկ 5 կոպեկ։
Բաժանորդ գրում են Թիֆլիսում մեիսյան խանութներում։

Խմբագրութիւնն հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
или Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բաժին 2 կ., բնկալեալների համար կրկնապատիկ։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պարձեալ խնդրում ենք թերթիս այն բաժանորդներից, որոնք գեռ չեն վճարել իրենց բաժանորդագինը, համբագրութեանս գործը չդժուարացնեն, և շտապեն ուղարկել թէ անցած տարիների և թէ այս տարուայ ապառիկները։

ՊՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրանիկան.—Լուրեր։ Մամուլի ձայնը։
Թղթակցութիւններ.—Գանձակ։
Քաղաքական.—
Խառն լուրեր
Հեռագրեր
Բանաւէրական.—«Ռուզան»
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Պետերբուրգից «Рус. Вѣд.»-ին հեռագրում են, որ Ախալքալաքի թիւրքիայում խարեբա և ժանտախտ յայտնուելու առթիւ Անդրիվկասի կառավարութեան համար 50,000 բուբլու վարկ է բացուում, որով միջոցներ պէտք է ձեռք առնուեն վերջնապէս ապաւարակի հիւանդութիւնների դէմ։

—

Անդրիվկասի զանազան կողմերից էլ լուրեր սկսել են գաղթել Արզրումեան հասարակապետութիւնը։ Ամենն ուղևորւում են բարեն Հերչի հաչուով։ Այսպէս այս վերջին չարաթը Թիֆլիսի վրայով ուղևորուել են 15 հոգի ընտանիքներ։

—

Անցեալ անգամ հաղորդել էինք, որ Կ. Պոլսից Ամերիկա դեսպանութեան տեղ հրաւիրուում է Մարի դեսպանուհին. բայց այժմ մեզ հաղորդում են, որ Մարին էլ հրաժարուել է Թիֆլիս գալուց։ Ինչպէս երևում է, Թիֆլիսից գնացած մանուկ նամակները չատ «գօրեա» նամակներ են եղել...

—

Թիֆլիսում նոր կազմուած դեղագործների ընկերութիւնը, «Кав.»-ի ասելով, այս օրերս հոյլատութիւն է ստացել քիմիական լաբորատորիա և ուսումնարան բանալու, որտեղ դեղագործ լինել ցանկացողները դեղագործութիւն կըսովորեն։

—

Մատգրութիւն կայ արքունի երկաթուղիների մեքենավարների և կոնդուկտորների համար 25 տարի ծառայութիւնից յետոյ թոշակ նշանակելը։

—

ԹԱԻՐԻՉԻՑ մեզ գրում են.—Պարկաստանում ծխախոտի արդիւնաբերութիւնն աներեւակայելի կայ ալով վերցրած է մի անգլիական ընկերութիւն տարեկան 13,000 ռուբլով, որ ամեն տեսակ ծխախոտի վրայ ակցիզ (акцизъ) է նշանակում, մինչդեռ առաջ ծխախոտի արդիւնաբերութիւնն ազատ էր այդպիսի հարկից։ Պարսկաստանում մեծ և փոքր, այլ թէ կին ծխում են. այժմ երբ ակցիզի պատճառով ծխախոտի գինը պիտի բարձրանայ, ամբողջ սատկի գրկուած է ներքսպացիների և մանուածական հայերի դէմ, որովհետև ակցիզի (акцизъ) ծառայողները մեծ մասամբ հայեր են։ Կարծում են թէ հայերը վճռական ձայն ունին այդ ընկերութեան մէջ, և նրանք հայերին վախեցնելով, ակցիզի կարող է ոչնչացնել։ Այս ժամանակի ծխերին հայերի գրութիւնը չատ երկիւղալի է, չնայելով որ պարսից բարեխնամ կառավարութիւնն առանձին կերպով հրամայում է, որ հայերին վնասներ չհասնեն խաժամուժ ամբոխից։

—

ՍԵՒ-ԲԱՂԱՌԻՑ. — Բուդաղեանների Մխիթար պատանուց Նաթայային քարեր կոչուած տեղում. կատաղի ալիքները նաւը զարկում են քարերին ու ջարդում։ Նաւաստիները տեղի յարմարութիւնից օգտուելով, կիսաջրասոյզ նաւի վրայ ապատում են, մինչև «Մասիս» չղնաւի հետուից երևալը. երբ վերջինս հրում է, իսկոյն նստում են դատակ և, ժրաջղութեան դրօշակը բաց թողնելով, «Մասիսի» նաւապետի ուշադրութիւն են գրաւում, որ և գալիս ազատում է նրանց։ Վերջին լուրերից տեղականում ենք, որ «Ս. Բաղարինը» արդէն բոլորովին ջրասոյզ է եղել։ Նաւը բարձած է եղել նաթայային մնացորդով, որ պատկանում էր Բոզչիլին։ Ջրասոյզ եղած նաւը ապահովացրած է 180 հազար բուբլով։

—Բիբի Հէյբաթը նաթայային լիճ է դարձել։ Թաղիևի չորս չատրուանները ամեն մի չարաթից առնի է, որ՝ ուժգին արտաւիժում են, ահագին բարձրութեան վրայից յորդ անձրևի նման չաղախելով ամեն ինչ։ Թաղիևի նաւթահորերը ահագին լճերը, բոլոր աւազանները լցնելուց յետոյ, մեծ առու են բաց արած, որի միջով գորչագոյն հեղուկը (նաւթը) քրքջալով, յորձանք տալով գնում, թափւում է ծովը։ Բալախանում նաւթն արժէ $2^1/_4$-$2^1/_2$ կոպէկ, իսկ Բիբի Հէյ-Բաթում բոլորովին ձրի է։ Շնորհիւ ոսկու գնի բարձրանալուն՝ կերոսինի առևտուրը քիչ կենդանացել է. ներկայումս առօրեայ ծախքը լինում է 7—7 $^1/_2$ կ. իսկ պայմանաժամով արժէ 9 կոպ.։

—Պարսկաստանի բերքերը ժողովելու ժամանակը լինելով, ներկայումս ղուան փողի գինը բարձրացել է և կը բարձրանայ մինչև թումանը 3 բուբլի։ Գները բարձրանալուն առաւելապէս նպաստում է անգլիական ստերլինգի արժէքների աւելանալը, որը մեծ դեր է խաղում։

—

ՄԵՆ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱՑԻՑ.— Օգոստոսի 4-ին մահմեդականները կատարելին՝ ի յիշատակ իմամների նահատակութեան՝ Ղաթիլ ծէսը. ոչ թէ միայն մզկիթներում էլին կատարում իրենց մզկիթների պատերի տակ. այդպէս էր կարգադրել Գանձակի պ. նահանգապետը։

—Այժմ այստեղ ապրում է ոմն Միրզա-Ջալալ. նա երկար տարիներ մնալով Պարսկաստանի քաղաքներում, չխուսել է այնտեղի քրիստոնեաների հետ, ուսումնասիրել է նրանց կեանքի լաւ կողմերը և, վերադառնալով իր ծննդավայր Շուշին, դէմ է կանգնում իրեն համագի մոլլաներին, մերկացնելով նրանց մոլեռանդ վարմունքները և անհիմն գաղափարները. սովորեցնում է չվախրշել քրիստոնեաներից, հետևել նրանց լուսաւորութեան և առաջադիմութեան օրինակներին, գործ ածել հարկաւոր դէպքերում քրիստոնեաների դեղատներում պատրաստած դեղերը, ուրանք, միւս մոլլաների կարծիքով, հակառակ են ճանաչւում մահմեդական կրօնի սկզբունքներին։ Միրզա-Ջալալը հենց նոյն իսկ կրօնի և չարիաթի վրայ հիմնուելով, ապացուցում է, որ իբր աւանդներից և ոչ մէկը հակառակ չէ նրանց կրօնին։ Մոլլաները այժմ սկսել են նորին մոլլին հալածել, անուանելով նրան հերիտիկոս և «դեաուր»։

Միրզա-Ջալալը բաւական զարգացած և պատկառելի անձ է, դէպի ամենաչին մարդ, ինչ կրօնի և ազգութեան էլ նա պատկանի, վերաբերում է չատ սիրով և քաղաքավարի։ Նրա այս ուղղութիւնը և մարդասիրական վարմունքը ոչ-մահմեդականների հետ սաստիկ զրկում է յարուցանում խաւարասէր դասի մէջ։

—

ԲԱԳՈՒԻՑ. — Ներկայումս Բագուն գաղթականութեան կեդրոնատեղի է դարձել. Ռուսաստանից ամենայն օր չոգենաւերը բազմաթիւ գաղթականներ են տեղափոխում Բագու։ Ռուս գաղթականները մեծ մասամբ ուղղուում են Անդրկասպեան երկիրները, մասամբ Ղարսի կողմերը ու Ղուբայի չրջակայքը։

Մի քանի օր սրանից առաջ «Թ. Բուդարին» չոգենաւը ծովում դժբախտութեան պատահեց Նաթայային քարեր կոչուած տեղում. կատաղի ալիքները նաւը զարկում են քարերին ու ջարդում։ Նաւաստիները տեղի յարմարութիւնից օգտուելով, կիսաջրասոյզ նաւի վրայ ապատում են, մինչև «Մասիս» չղնաւի հետուից երևալը. երբ վերջինս հրում է, իսկոյն նստում են դատակ և, ժրաջղութեան դրօշակը բաց թողնելով, «Մասիսի» նաւապետի ուշադրութիւն են գրաւում, որ և գալիս ազատում է նրանց։ Վերջին լուրերից տեղականում ենք, որ «Ս. Բաղարինը» արդէն բոլորովին ջրասոյզ է եղել։ Նաւը բարձած է եղել նաթայային մնացորդով, որ պատկանում էր Բոզչիլին։ Ջրասոյզ եղած նաւը ապահովացրած է 180 հազար բուբլով։

—Բիբի Հէյբաթը նաթայային լիճ է դարձել։ Թաղիևի չորս չատրուանները ամեն մի չարաթից աւելի է, որ՝ ուժգին արտաւիժում են, ահագին բարձրութեան վրայից յորդ անձրևի նման չաղախելով ամեն ինչ։ Թաղիևի նաւթահորերը ահագին լճերը, բոլոր աւազանները լցնելուց յետոյ, մեծ առու են բաց արած, որի միջով գորչագոյն հեղուկը (նաւթը) քրքջալով, յորձանք տալով գնում, թափւում է ծովը։ Բալախանում նաւթն արժէ $2^1/_4$-$2^1/_2$ կոպէկ, իսկ Բիբի Հէյ-Բաթում բոլորովին ձրի է։ Շնորհիւ ոսկու գնի բարձրանալուն՝ կերոսինի առևտուրը քիչ կենդանացել է. ներկայումս առօրեայ ծախքը լինում է 7—7 $^1/_2$ կ. իսկ պայմանաժամով արժէ 9 կոպ.։

—Պարսկաստանի բերքերը ժողովելու ժամանակը լինելով, ներկայումս ղուան փողի գինը բարձրացել է և կը բարձրանայ մինչև թումանը 3 բուբլի։ Գները բարձրանալուն առաւելապէս նպաստում է անգլիական ստերլինգի արժէքների աւելանալը, որը մեծ դեր է խաղում։

—

ՄԵՆ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱՑԻՑ.— Օգոստոսի

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

"ՌՈՒԶԱՆ"

ԳԱՏՄԱԿԱՆ ԴՐԱՄԱ 5 ԱՐԱՐՈՒԱԾՈՎ,
ԵՒ ԵՐԿՈՒ ԳԱՏԿԵՐՈՎ,
հեղ. Մուրացանի
(Մատենախօսական ակնարկ)
(Վերջ) *)

Առ հասարակ դրամայի մէջ ներքին կեանքի խորին ուսումնասիրութիւն և բացատրութիւն չկայ։ Այդ պակասութիւնը խիստ աչքի է ընկնում հոգեկան մի դրութիւնից դէպի միւսը անցնելիս։ Ռուզանը յայտնել է արդէն իր վճիռը (Ե-րդ արարուած) և խնդրում էր, որ իրեն չխանգարեն։ Հօր, մօր և սիրելի փեսայի արցունքները, աղաչանքը և սիրտ կարատող խօսքերը չեն կարող ի հարկէ ոչնչ ազդեցութիւն չթողնել Ռուզանի վրայ։ Բնականաբար նա պիտի մի փոքր մեղաւոր, թէ և այդ կլինի բոլշևական։ Եւ այդ դրութիւնները պիտի արտայայտուին գործողութիւններով։ Սակայն Ռուզանը այդ դէպքում այս է միայն ասում.

—«Ո՛չ մայր իմ, մայր իմ, դու մորմոքեցնում ես իմ սիրտը, դու թունաւորում են իմ մէջ բոլոր արիութիւնս»։

*) Տես «Նոր-Դար» № 125.

Միևնոյն տեսիլի մէջ դրամատիքական նաթիւնն (драматизмъ) մէջ է և Ջալալը. որը գոհել, դուսորը, թէ ժողովուրդը։ Այդ դրամատիքական դրութիւնը դարձեալ չի ներկայացնում. Ռուզանի պէս դա էլ միայն մի խօսք ունի.—Առաւած իմ, Առաւած իմ, ինձ դրել ես երկու որերի մէջ՝ մէկը քան զմիւսը սարսափելի»։ Առհասարակ ամբողջ վէպում մէջ վիպական տարրը դրամատիքականից գերազանցում է։

Մի անգամ պ. Աղայեանցն ասում էր, թէ հայի գլխում երկու միտք միաժամանակ չեն տեղաւորւում։ Մենք ևս կարող ենք այդ կարծիքին գալ, եթէ մի լուրջ հայեացք դարձնենք մեր գեղեցիկ գրութեան մէջ յայտնի տիպերին։ Ընտանեաց անձնաւորութիւնները տիպեն միայն մի կրքի, մի զգացմունքի։ Չկան այն ազատ ու ընդարձակ բնաւորութիւնները, որ Շէքսպիրի գրչուածում կրթուած բանաստեղծներն են տալիս։ Հեղինակը մի կեղծաւորի տիպ է ներկայացնում, զուր կասկածը, որ այդ անձնաւորութիւնը ոչ միայն խօսքի, աչքի ընկնող գործերի, այլ և հաց ուտելում, ջուր խմելում կեղծաւորում է։ Եւ նա միայն կեղծաւոր է, էլ ուրիշ ոչինչ։ Դա անբնական է։ Իսկապէս ամենածայրայեղ մարդկանց մէջ անգամ չատ կրքեր, չատ զգացմունքներ կան. բայց դրանց մէջ ի հարկէ չրջապատող հանգամանքների չնորհիւ բարձրիգլուխ կանգնած է մէկը։ Այսպէս «Ռուզան»-ի Սևադան չար է և նրանից ոչ մի քաղցր խօսք, մի բացականչութիւն չէք լսում երբէք, նոյն իսկ կեղտխառնի ժամանակ։ Սևադայի մասին լինելով խօսքը չմոռանանք այն, որ պ. Մուրացանը դաւաճանի տիպը դարձեալ Սիբնէքից է վերցրել։ Ես կարծում եմ, որ այդպիսի ընտրութիւնն անյաջող է և անպատեհ։ Մինչ Սիմնիքը այնպիսի մի երկիր է, որ հենց դաւաճաններ է ստեղծում։ Այդպիսի վարմունքը հասարակութեան վրայ ես լաւ տպաւորութիւն չի թողնիլ։

Դրամատիքական բանաստեղծը մենախօսութեանը չատ զգուշութեամբ պիտի մօտենայ։ Եթէ անհրաժեշտ հեղինակի մի վաստակը վերցնէք և նրանից միայն մենախօսութիւնները կարդաք ուշադրութեամբ, կարող էք նրա տաղանդի մասին բաւական պարզ գաղափար կազմել։ Բայց մենախօսութիւնը թոյլատրելի է միայն այն դէպքում, երբ գործող անձնաւորութիւնն իր ներքինը գործողութեանց և խօսակցութեանց միջոցով չէ կարող մերկացնել, երբ նա բարոյական զրգռման վերին աստիճաններում գտնուելով, միայն իրեն հետ կարող է խօսել ու խորհել։ Մենախօսութիւնը, որ երբեմն տեղի է ունենում հասարակութեան հետ, որի նիւթը արտաքին աշխարհն է, տեղ չպիտի ունենայ դրամայի մէջ։ Այս տեսութեամբ առաջնորդուելով «Ռուզան»-ի Ա. արարուածում հերոսուհու մենախօսութիւնը աւելորդ պիտի համարնէր։ Ռուզանն այդ բոլորը կարող էր ասել՝ չարունակելով խօսակցութիւնը Ջալալի հետ։ Եթէ այդ արած է այն մտքով, որ Արշանոյշը հասնի և տիրուհուն միայնակ գտնի, ներելի չէ։

Մի քանի խօսք ևս այն մասին, թէ ինչ է «Ռուզան»-ի միտքը, թէ նրա հերոսուհին որքան համակրելի անձնաւորութիւն է։ Մեզ զրաղեցնող անձնաւորութիւնը չունի այնպիսի օրէնքներ, կարգեր ու կանոններ, որոնցով չափել կարողանայինք նրա բարոյական հասակը։ Եւ դրանցով էլ բարոյականը հարկաւ չի կարելի ճանաչել։ Մի մարդու բարոյականութիւնը չափելու համար աւելի լաւ է տեսնել թէ նա իր գործունէութեան մէջ ինչպիսի սկզբունքներով, ինչ բարոյական ձգտումներով է առաջնորդում, թէ այդ սկզբունքների և ձգտումների մասին նա ոչինչ չյայտնէր։ Գալով Ռուզանին՝ մենք կը նայենք նրա գործին և հենց դրանով էլ կորոշենք նրա համակրելի կամ հակակրելի լինելը։

Ռուզանը իր կատարած գործի էութեան տեսակ նման է Շիլլերի Օրլէանի կոյսին։ Ծովհաննան հայրենի լեռների վրայ իր հօտերն էր արածում, երբ Ֆրանսիական բանակի պարտութեան ձայնն աւելնոր տարածուելով նրան ևս հասաւ։ Կոյսը ժայի մէջ։ Այս տեսութեամբ առաջնորդուելով «Ռուզան»-ի Ա. արարուածում հերոսուհու մենախօսութիւնը աւելորդ պիտի համարնէր։ Ռուզանն այդ բոլորը կարող էր ասել՝ չարունակելով խօսակցութիւնը Ջալալի հետ։ Եթէ այդ արած է այն մտքով, որ Արշանոյշը հասնի և տիրուհուն միայնակ գտնի, ներելի չէ։

Մի քանի խօսք ևս այն մասին, թէ ինչ է «Ռուզան»-ի միտքը, թէ նրա հերոսուհին որքան համակրելի անձնաւորութիւն է։ Մեզ զրաղեցնող անձնաւորութիւնը չունի այնպիսի օրէնքներ, կարգեր ու կանոններ, որոնցով չափել կարողանայինք նրա բարոյական հասակը։ Եւ դրանցով էլ բարոյականը հարկաւ չի կարելի ճանաչել։ Մի մարդու բարոյականութիւնը չափելու համար աւելի լաւ է տեսնել թէ նա իր գործունէութեան մէջ ինչպիսի սկզբունքներով, ինչ բարոյական ձգտումներով է առաջնորդում, թէ այդ սկզբունքների և ձգտումների մասին նա ոչինչ չյայտնէր։ Գալով Ռուզանին՝ մենք կը նայենք նրա գործին և հենց դրանով էլ կորոշենք նրա համակրելի կամ հակակրելի լինելը։

Ռուզանը իր կատարած գործի էութեան տեսակ նման է Շիլլերի Օրլէանի կոյսին։ Ծովհաննան հայրենի լեռների վրայ իր հօտերն էր արածում, երբ Ֆրանսիական բանակի պարտութեան ձայնն աւելնոր տարածուելով նրան ևս հասաւ։ Կոյսը վառուկան հայրենիքի ազատութեան վեհ գաղափարով, դրօշը ձեռն առաւ, զրահաւորուեց, և այդպէս աչքանաչ յուսահատ զօրքի ու թագաւորի առաջը, բոլորին ոգևորութիւն ու արիութիւն ներշնչեց։ Նա զօրքի գլուխն անցաւ և թշնամու բանակը խորտակեց։ Բայց այդ չէ գլխաւորը։ Նրա երկնային չուքով լիացած կուսական սիրտը բաբախել սկսեց երկրաւոր սիրով։ Եւ որքան յանցաւոր սէր էր այդ։ Հայրենիքի բախտը կրիտիկական րոպէում է ապրում, իսկ Ծովհաննան մարտիրոսոր սիրով բորբոքուել է իր բնիկ երկրի թշնամու համար։ Նա սիրում է հայրենիքի թշնամուն, անգլիական զօրքի հրամանատար Լինէլլին։ Որքան զօրութիւն, հոգեկան արիութիւն էր հարկաւոր Ծովհաննային, հայրենակիցներից կալսարդ ճանաչուած, անարգուած, հալածուած և թշնամու ձեռին գերի հերոսուհուն, իր սիրտը զսպելու, իր սիրոյ չերմ զգացումները խեղդելու և հայրենիքի չահերին նուիրուելու համար։ Միեթ պակաս քաջութիւն էր հարկաւոր Ռուզանին, քիչ պիտի լինէր միեթ նրա հոգեկան վիշտ ու տանջանքը Ատրևեսէհին մոռանալու և յանուն ընդհանուր չահուց նրան զինելու, որից զարչում է, որից զզում է, որ իր հայրենակիցներին աւելին է, որի ձեռները չաղախուած են իր հարազատների արիւնով։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՅ ՎԱՂՈՒՑԻ ԿՅԱՆՔԻՑ ԵՎ ԳՈՐԾԵՐԻՑ

— Ես ինձ համար ոչինչ չեմ ուզում, ոչ էլ ինձ համար եմ աշխատում, այլ ուզում եմ, որ մեր ազգը, մեր հայրենիքը ունենան ինչ որ ունեն ուրիշ ազգերն ու հայրենիքները, որ մենք էլ ունենանք մեր ազատ ու անկախ կառավարությունը, մեր ազատ ու անկախ եկեղեցին, մեր ազատ ու անկախ դպրոցները, մեր ազատ ու անկախ մամուլը, մեր ազատ ու անկախ գրականությունը, մեր ազատ ու անկախ արհեստներն ու առևտուրը, մեր ազատ ու անկախ գործարանները, մեր ազատ ու անկախ ամեն ինչ, որ ունեն ուրիշ ազգերն ու հայրենիքները, որ մենք էլ ունենանք մեր ազատ ու անկախ զինվորությունը

հրամանի են սպասում... ուստի և դրա անունը մենք դեռ չենք կարող տալ, ուրվհետև կոմսի Նլինոյի *) չնորհքը մեզ չի տուած։

Գուշակութիւնների նկատմամբ պէտք է ասենք, որ պատկերազարդ «Արձագանք» չաթախաթերին առանձին կերպով զբաղում է «Նոր-Դար»-ի աշխատակիցների անուններն գուշակելով. ինչ անի խեղճ չաթախաթերը. երևի «Նոր-Դար»-ի աշխատակիցների անուններն ասելի են հետաքրքրում նրա բաժանորդներին, քան թէ նրա տուած ուրիշ նիւթերն ու յօդուածները։ Պատկերազարդին իր գուշակութիւնն երկու բանի վրայ է հիմնում. մէկ ոճի և մէկ էլ S. տառագրութեան վրայ. բայց մի բան մոռանում է պատկերազարդը. այդ այն է, որ «La style c'est l'homme» կարող է ասել միայն նա, որ ինքը ոճ ունի և ոճէ հասկանում, և ոչ «Արձագանք» չաթախաթերը, որ իր բազմատեսակ ձևախոհութիւնների մէջ ամէն տեսակ ոճեր իրար հետ խառնել է և դուրս է բերել մի անոճ, անդոյն, անհամ, անհոտ խառնուրդ. այդպիսի խառնուրդին ասելը մարդը չի կարող իմանալ և այն, որ «Նոր-Դար»-ի առաջնորդող և բանասիրականի ոճերը բոլորովին տարբեր են։ Իսկ ինչ որ վերաբերում է S. տառագրութեանը, պատկերազարդ «Արձագանքը» կարծում է, որ S. է տառագրած, ուրեմն դա Սիմոն է նշանակում. եթէ այդպէս լինէր, ուրեմն և «Արձագանքի» մէջ ամեն մի S. տառագրութիւնը պիտի լինէր Ցոլհաննէս, բայց չէ որ այդ S.-ն կարող է լինել և Ցավհաննէս, և Ցակոբ, և Ցովսէփ, և Ցուզաս...

«Թէ որ բան չանես, դնա խանի դուռը» (ազգ. առած)։

***

«Արարատ» ամսագրի օգոստոսի համարում կարդում ենք.

«Ներկայ տարւոյ փետրվարի 15-ին Ձեմարանից փոքր փախած լսարանների ուսանողներից տասնը խնդրագրած էին եղել Ձեմարանի վարչութեանս կրկին ընդունուելու համար։ Սրանով վարչութիւնս յայտնում է ի գիտութիւն բոլոր ուսանողներին, որ նրանք ոչնչի օրինաւոր վկայութիւն և կամենում են իրենց ուսումը չարունակել, որ վարչութիւնս պատրաստ է ընդունել բոլոր ցանկացողներին և մէկից տալ Ձեմարանական դասընթացը աւարտելով մրցագիր (դիպլոմ) ձեռք բերելու»։

Իրե՞ն մի հրապոյր ուսանողների համար այս յայտարարութեան ետևից ածելագրած է, որ Ա. լսարանցիներն առանց ***-ների կը մնանն Բ. լսարան, Բ. լսարանցիները Գ. լսարան, այն պայմանով, որ երկու լսարանների առարկաներից քննութիւն տարուայ վերջում։

Այս յայտարարութեան մէջ մեզ համար մի բան անորոշ է մնում. ինչ է նշանակում փոքր փախած ուսանողներ. դուրս գնացած՝ դա մի անորոշ բառ է. եթէ դուրս գնացած նշանակում է միայն իջևնոց վարձով դուրս փնացած, կարծում ենք, ի հարկէ, լաւ է վարում Ձեմարանի վարչութիւնը, որ նորից ընդունում է այն ուսանողներին, որոնք իրենց կամքով դուրս են գնացել, բայց յետոյ իրենց դուրս գնալու վրայ փոչմանում են և խնդրագիր են տալիս նորից Ձեմարան մտնելու. Բայց այդ միայն այն դէպքում, երբ այդ ուսանողները փոչմանում, ղղջում են իրենց արարքի վրայ, քանի որ չի վերացել դրանց զժգոհութեան, դուրս գնալու պատճառը, քանի որ Ձեմարանն այժմ էլ կառավարում է նոյն կանոնադրութեամբ, որով կառավարում էր հանգ. Կաթողիկոսի օրով։

Բայց եթէ «դուրս գնացած» ուսանողների մէջ մտնում են և աչքից ընկած ուսանողները, վերջիններիս կրկին Ձեմարան ընդունել, թէկուզ դրանց վկայագիր էլ տրուած լինի, դա արդէն դպրոցական կարգապահութեան հակառակ վարմունք է, էլ չենք ասում աւելին։

*) Կոդեցի Նլինոն երևելի դուշակող կին է Թիֆլիսում։

Դարձեալ՝ ինչ է նշանակում օբլիոնոյը վայելէլ ունեցող ուսանողներ. մթէ պոբեդոնոսցև օբլիոնոյը վկայագիր էլ է տրըւում։ Մի խօսքով այստեղ մի Ե կայ, որ մեզ համար մութն է։

Դարձեալ կրկնում ենք, եթէ իրենց կամքով դուրս գնացած ուսանողներին են կրկին ընդունում Ձեմարան, դա վատ չէ, բայց եթէ արձակուածներին էլ են ընդունելու, թէկուզ այդ արձակուածները Ձեմարանի վարչութեան վերնէյշ օրինաւոր վկայագիր էլ ստացած լինեն,—դա լաւ բան չէ։ Բայց չենք կարծում, որ Ձեմարանի վարչութիւնը վերջին ձևով վարուի.

***

Պ. Գր. Արծրունին սարսափելի նըմանը չունեցած բարկութիւնից ու ցասումից ինքնամոռացութեան մէջ է ընկել «Մշակ» լրագրի 89-րդ համարի մէջ նա գրում է. «Կ. Պոլսի «Արեւել» լրագիրը, որը մի ժամանակ բաւական յարգուած թերթ էր, այժմ ընկնելով այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք արհարամարհուած են թէ Թիֆլիսում (ով ասաց) և թէ Կ. Պոլսում, կատարեալ չքե-ըեան է հասել»... և դրա հետից մի չարք «լիրբ», «ցեխոտ», «անամիլ դրպարտութիւն», «սուտ», «անամօթ սուտ», «հրէշաւոր կեղծուած» և այլ «հրէշաւոր» խօսքեր, է ուղղում «Արեւելք» լրագրի դէմ...

Ձենք պատկանում, չենք,պ. Գր. Արծրունի, որ էլի դուք ձեր գլուխը կորցրիք և այդպիսի խօսքերով սկսեցիք ծախել ձեր օրգանի թերթերը. Ձենք կարծում, չենք, պ. Գր. Արծրունի, որ գայ մի օր-ժամանակ, որ ձեր լեզուն դառնայ մաքուր ու խոտակ.—Ո՛չ, մենք մեր յոյսը կորցրել ենք արդէն...

Եւ դիտէք ինչու է պ. Արծրունին կատաղում «Արեւելք» լրագրի դէմ, և հայհոյում նրան.—միայն նրա համար, որ «Արեւելքը» «տեղակալութեան» հարցում համեմատ չէ պ. Արծրունու. Եւ դիտէք «Արեւելքի» խմբագրութեան մէջ ինչ անձերի փոփոխութիւն է եղել.—միայն այն, որ Հայկական այլ ևս «Արեւելքի» խմբագրութեան անդամ չէ,—այդ Հայկակը, այդ Արիփեր Արիփարեանը, որ թէ Պոլսում և թէ մանաւանդ Թիֆլիսում և թէ ամեն տեղ մի այնպիսի հոչակ է վայելում, որ նոյն իսկ պ. Արծրունին ամաչում է նրա անունը տալ, չնայելով որ նրա գրած մի ամբողջ յօդուածը տպագրում է իր օրգանի նոյն 89-րդ համարում։

Որովհետև Արիփեր Արիփարեանն այլ ևս չկայ «Արեւելքի» խմբագրութեան մէջ, ուրեմն մնացածները «արհամարհուած են թէ Թիֆլիսում և թէ Կ. Պոլսում և կատարեալ լիրբ են»... Ահա պ. Արծրունու դատողութիւնը. Կնցցես կիրը, կնցցես կրքի կատարելութիւն...

Գ ի տ ա ւ ո ր

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՆՁԱԿ, յուլիսի 25.—Մեր կովկասեան դաւառական քաղաքների ընդհանուր աչքի ընկնող դիծը դանդաղութիւնն է, բայց չենք կարծում, որ մի որև է քաղաք այդ կողմից հասնի մեր նահանգապետանիստ Գանձակին. Գանձակը դանդաղութեան աչխարհ է և իր այս յատկութեամբը տասնեակ տարիներով ետ է մնացած Կովկասի բոլոր մանրուխոչոր քաղաքներից։ Այստեղ դանդաղ են ընթանում հանրային գործերը (աւելի ճիշտ ասած՝ իսկի չեն ընթանում). դանդաղ, ծանր քայլերով են մեզ գալիս մարդիկ, դանդաղ են չրջում նոյն իսկ կառքերը։ «Նոտարելու ինչ կայ. չոտոլին տղայ չի լինիլ», ահա այն կանոնը, որով առաջնորդում է մեր թէ ներքին և թէ արտաքին կեանքը։ Գանձակ մտնողը, կարծես, կորցնում է ժամանակի այն հաչիւը, որին սովոր է ուրիշ քաղաքներում։ Այստեղ ժամանակը «աուղ» չէ, այլ ընդհակառակն երկար և էժան։ Մեր բոլոր հատասար է ուրիշների վայրկեանին։ Եթէ ուրիշ լուսատար երկրներում ճգնում են ամեն մի ժամ անգործ չանցնել, չահատէտ կերպով և, եթէ հնար է, օրը 25 ժամ դարձնել, մենք՝ գանձակեցիքս հնարներ ենք մտածում թէ ինչպէս օրը կարճացնենք, ապահովենք։

Ի՞նչից է առաջ գալիս այս ընդհանուր յուլութիւնը (տեղական բարբառով «իլութիւն»)—կլիմայից, թէ երկրի բերրութիւնից, որ աչխատասէրից մեծ ջանքեր չի պահանջում, թէ ժողովրդի հոգու մէջ թաղնուած է մի տեսակ դանդաղութիւն, ծուլութիւն,—այս հարցերի մէջ չեմ մտնում։ Այստեղ նկատենք միայն, որ Գանձակի հայ ժողովրդի բարբառը ցոլացնում է խօսող ժողովրդի այդ առանձնութիւնն ամբողջապէս։ Մեր լեզուի արևելեան բաժնի գաւառաբարբառների մէջ չենք գտնել ոչ մինը (բացի գուցէ Շամախունը), որ այնքան զուրկ լինի կենդանութիւնից և թափից, այնքան հարթ ու ողորկ լինի, մանաւանդ արտաբերութեան կողմից, որքան Գանձակինը։ Գանձակի բարբառն իր քերականական կազմութեամբ էլ ևս ըստ ամենայնի նման է Ղարաբաղի բարբառին, այնպէս որ մեր «նանները» մեծ հրճուանքով լսում են «Խաչեն Ասպոր կազէթները», բայց չունի նրա առնական այժը, որ ամանք կոպտութիւն են համարում. նա, կարծես, կանացի լեզու է։

Գանձակի այս ընդհանուր դանդաղութիւնն տնում, զօրանում է այսպէս կոչուած «թիւն» (темный рядъ) վաճառականութեան։ Գանձակի «թիւնը» աւելի երկարն է և աւելի զրկուած արևի լուսից։ Երևակայեցէք մի քաղաք վերտերևյութեամբ նեղլիկ, կամարածածկ փողոց, կտրուած խաչաձևնոյնպիսի կարճիկ փողոցներով, երկու կողմը չարչար մաներ մաներ խանութներ։ Երբ ներս էք մտնում այդ փողոցը, որ արևի լոյսն ու ջերմութիւնը ստանում է միայն կամարների մէջ չինած փոքր երդիկներով, խանութները խլում է երեսներիդ։ Մարդ ակամայ յիշում է հարիւրաւոր տեսակ Թեբէլի «Մեռելոց քաղաքը»։

Ով որ աղատ օդի մէջ է ապրել՝ կկամ ժամից աւելի չի կարող մնալ այս նկուղում, խեղդն թմրութիւնը պատում է մարդուս և կամայ ակամայ աչքերը ծանրանում են։ Հապա ինչ ազդեցութիւն պիտի ունենայ «թիւնը» նրանց վրայ, որոնք 12 տարեկան հասակից մաչում են նրա խոնաւ և հնդաուցիչ մթնոլորտում։ Իսկ Գանձակի բնակիչների ամենամեծ մասը քիչ կամ չատ տարիներ անց է կացնում այտեղ։ Առողջ դէմք քիչ կը գտնէք «թիւնի» մէջ. գունատ և մեռելտիպ դէմք ունին ամենքը։ Խանութներից չուաձև պատահում են ոսկրացաւ և ուրիշ հիւանդութիւններ։ Ինչքա՜ չեն գանձակեցիք լոյս աչխարհ դուրս գալիս այս ներքնատներից, քանի որ յարմարաւոր տեղեր չատ կան թէ հայերի և թէ թուրքերի թաղում.—ոչ մի բանաւոր պատճառ չկայ. պատճառը միայն սովորութիւնը և ձևներից դուրս չգալու բացակայութիւնն է. վաճառականներից ամեն մինն առանձին ցանկանում է դուրս գալ, բայց որ միասին խորհուրդ չեն անում, գործը գլուխ չի գալիս։ Դանէ լինային իրենց կարողութիւնը, որ յանձնուած է մի քանի պատաւ թուրքերի կասկածելի հաւատարմութեանը, օդուտ քաղեն անցեալի վարձերից, երբ թուրքերի ձեռից տասնեակ և հարիւր հազարներ մոխիր են դառել կամ կողոպտուել անպատիժ։

«Թիւնը» բացի ֆիզիքական վնասներից, վնասում է բնակիչներին և բարոյապէս։ Սա մի առանձին աչխարհ է, մի բիրտ, կլոր, ժողովրդեան. այստեղ վճռում են պարապ վաճառականները օրուայ ամեն տեսակ հարցեր, քաղաքական և քաղաքային, պատմական, լրագրական («...ականներ»). այստեղ բացուում են ընտանեկան յարկերը և քննուում անձեր տեսակն «տժուռնական խնդիրներ»։ Սա մի «բամբասանքի վարժարան» է, ընտանեկան—հարեան ական սովորութիւններով, ուր որ մի ծայրից մինչև միւսը կարելի է բղաւելով խօսել ամեն տեսակ խնդիրների մասին։

Դր. Աչոտեան.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

«Jour. des Debats»-ն ՖՐԱՆՍ. ՆԱԻԱՄԲԻ ԱՆԳԼԻԱ ԱՑՑԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ.—Ցայտնի է, որ ֆրանսիական լրագրիչներից մի քանիսը չատ խորթ աչքով են նայում այն հանդամանքի վրայ, որ ֆրանսիական նաւախումբը, Ռուսիա այցելելուց յետոյ, այցելում է նաև Անգլիա։ Քանի որ Անգլիան մոտեցել է եւսպական դաչնակցութեանը և քանի որ Ֆրանսիան ու Ռուսիան դէմ են այդ դաչնակցութեանը, և Կրոնչտատի անցքերը ոչ այլ ինչ էին, եթէ ոչ բացարձակ ցոյցեր այդ դաչնակցութեան դէմ ուղղած,—հետևաբար ֆրանսիական նաւախմբի Պորտսմուտ այցելելը, յիշեալ լրագիրների կարծիքով, Ֆրանսիայի և Ռուսիայի արժանապատուութիւնը վիրաւորել է նշանակում։ Սակայն գործի վրայ այդպէս չէ նայում «Journal des Depats»։ Ինչու մենք չպէտք է Պորտսմուտ գնանք,—հարցնում է յիշեալ լրագիրը.—Ճշմարիտ է, Անգլիան ցանկանում և խրախուսում էր եւսպական դաչնակցութեան վերահաստատումը, բայց նա ինքն այնուամենայնիւ չէր միացաւ այդ դաչնակցութեան հետ։ Նա այդ բանի համար ղրկում էր Իտալիային նրան յոյս էր տալիս, որ այժմ աչխատում է փոքր առ փոքր ցրել, բայց նա այնքան էլ անհեռատես չէր, որ ինքն էլ գործի մէջ անվիշապես խառնուէր։ Եւսպական դաչնակցութեան վերահաստատումը վերջացած է և Անգլիան ըստ երևոյթին աչխատում է պատասխանատուութիւնը հեռացնել իրենից։ Մենք խիստ կը սխալուէնք, եթէ խոյս տայինք այդ խաղին մասնակցելուց։ Վիկտորիայ կայսրին փառաւորապէս ընդունելուց յետոյ, Անգլիան կամենում է մեզ էլ նոյնպիսի փառաւոր ընդունելութիւն անել։ Երոպայում Անգլիայի վարմունքն արդէն սկսում են աւելի մեր օգտին բացատրել, քան թէ դաչնակից պետութիւնների օգտին. Թող ուրեմն չխանգարեն այդ բացատրութիւններին, որ ընդհակառակը մեզ համար աւելի օգտաւէտ է խրախուսել։ Ընդհանրապէս Անգլիայից մեզ բաժանում է իսկապէս մի միայն եղիպտական խնդիրը, որ ի հարկէ խիստ նշանաւոր խնդիր է և մինչև իր վճիռն ստանալը կարող է մեզ մոտեցնել իրար. բայց ոմն կարող է ասել, որ Անգլիան չի հասկանալ, վերջապէս, որ այդ խնդիրը յուղարկուում է իր բոլոր քաղաքականութիւնը և իր ներկայութիւնը Նեղոսի ափերի վրայ իրեն աւելի մեծ անյարմարութիւնների է ենթարկում, քան թէ այն օգուտները, որ ինքն ստանում է դրանից։ Ուրեմն կընանք Պորտսմուտ, ինչպէս գնացինք Կոպենհագէն և Ստոկհոլմ. Ֆրանսիան երջանիկ կը լինի և կը հպարտանայ այն ընդունելութեամբ, որ ցոյց կը տան այնտեղ մեր ծովագնացներին. ինչ-ինչ լրագրական աղբ կամ պախա վառուած յոդուածները չեն կարող հասարակաց կարծիքը ներկայացնել, որ իրերի վրայ առողջ և խելացի կերպով է նայում»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հաղարջէջ խճճէջ։—«Ժամանակը փող է»—ասում են անգլիացիները, և այդ կանոնը գործադրում են կեանքի մէջ։ Այսպէս «Sydney Herald» լրագրի խմբագիրը խիստ ինայում է իր ժամանակը, ուստի և ամեն օր, ով ցանկանում է նրա հետ խօսել, պէտք է նախապէս գրասենեակում տոմսակ դնի, որով իրաւունք է ստանում նրա հետ խօսելու։ Մի ֆունտ ստերլինգ կամ ռուսական փողով ութ ու կէս րուբլուց աւելի վճարելով, յիշեալ խմբագրի հետ կարելի է խօսել մի ամբողջ ժամ. այդ դումարի կիսով կարելի է միայն կէս ժամ խօսել. իսկ մի քառորդ ժամ խօսելու համար տոմսակն արժէ հինգ ղինեզ։

Մեռնող պառաւի խոսքն է։—Լիտոնում վերջերումս մի հարուստ պառաւ է մեռնում, որ իր կտակի մէջ չի մոռանում և իրեն չատ տարիներ բժշկող անային բժիշկին։ Պառաւը մի փոքրիկ գեղեցիկ չինուած պահարան է կտակում իր բժշկին, վերջինիս «անձնական ջանքերի համար», որոնց չնորհիւ ինքը հասել էր պառաւութեան հատակին։ Երբ ուրախացած ու զարմացած էսկուլապը (բժիշկը) բաց է անում իրեն նուիրած պահարանը, միջին գեղեցիկ սրուակներով ու տփերով կարդում է չարուած և ձեռ չտուած գանում է այն բոլոր դեղերը, որ նա գրել էր պառաւի համար։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՓԻՆ ԴՈՐՇԱԿԱՎՈՐՈՒԹԻՒՆԻՑ

ԼՈՆԴՈՆ, 9 օգոստոսի.—Միջերկրական ծովի անգլիական նաւախումբը Վիլլաֆրանկում դիմաւորեց ֆրանսիական նաւախմբին։ Ֆրանսիական ծովակալ Դեպռերէն անգլիական սպաներին ճաշ տուեց, որի ժամանակ առաջարկուեցան Վիկտորիա թագուհու, հասարակապետութեան նախագահ Կարնոյի կենացները։ Միևնոյն ժամանակ Կրոնշտատում եղած ֆրանսիական նաւախումբը Պորտսմուտ եկաւ։ Ծովակալ Կլենվիլեամի և Կանտուտի հերցոգի հետ փոխադարձաբար այցելելուց յետոյ, ծովակալ Թերվէն իր սպաներով Օսբորն ուղևորուեց, որտեղ նրան ընդունեց թագուհին։ Ընդունելութիւնը փառահեղ էր։ Ծովակալին տարան արքունի կառքով։ Թագուհին նախաճաշի ճաշ տուեց։ Ճաշի ժամանակ թագուհու այս և այն կողքին նստած էին ֆրանսիական դեսպան Վատինգտոնը և ծովակալ Թերվէն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 օգոստոսի.—Լրագիրները հաղորդում են, որ պետական խորհրդին առաջարկ է անում կայսրութեան մէջ օտարերկրացի գաղթականների թիւը սահմանափակելու մասին։

«Нов. Вр.»-ն հաղորդում է, որ պատշաճաւոր իշխանութիւններին առաջարկուած է ամեն տեղ ամենայն խստութեամբ գործադրել 1865 թուի յուլիսի 10-ի և 1882 թուի մայիսի 31-ի կանոնները, որպէս զի հրէաները ոչ մի դէպքում ապօրինի կերպով հողեր, գործարաններ, ջրաղացներ և հողմաղացներ և ուրիշ գործարաններ չունենան։

ԲԱԼՏԻՄՈՐ.—Համբուրգից այստեղ հասան 50 հոգի ռուսական հրէաներ. նրանց բռնեցին. քանից երեւաց, որ նրանք ոչ մի միջոց չունին. Ճանապարհածախսը Հիրշի Ֆոնդից է եղել։ Գործը կը քննուի Վաշինգտոնի դատարանում։

ՇԱՆՀԱՅ.—Չինական մի զօրաւոր նաւախումբ հրաման է ստացել Նանկին գնալու. մի ուրիշ նաւախումբ կեդրոնանում է Եանցէ-կիանգից դէպի հիւսիս։ Պեկինի կառավարութիւնը սկսում է խիստ երկիւղ կրել, ի նկատի ունենալով պետութիւնների սպառնալիքը զէնքի դիմելու այն դէպքում, եթէ Չինաստանը մերժէ պահանջուած գոհացումը տալը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 օգոստոսի.—Բարձրագոյն հրաման է հրատարակուած, որով թոյլ է տրւում գործադրելու այն միջոցը, որ գործադրւում է, այն դէպքերում, երբ, պետական բանկի դրութեանը նայելով, ֆինանսների մինիստրն անհրաժեշտ է ճանաչում ոսկու ապա-

հովութեամբ թղթադրամները դուրս թողնել։

Ֆինանսների մինիստրը սենատին զեկուցեց ոսկու ապահովութեամբ ժամանակաւորապէս 25 միլիօն րուբլու թղթադրամներ դուրս թողնելու մասին։ Պետական գանձարանին պատկանած և պետական բանկի ընթացիկ հաշուի մէջ գտնուած ոսկուց, Ֆինանսների մինիստրի օգնականի ներկայութեամբ, վերաստուգէչ մասնաժողովին և Պետերբուրգի բորսային մասնաժողովի ներկայացուցիչների ու օտարերկրեայ հիւրերին բանկի մէջ ներկայացնել 25 միլիօն րուբլի ոսկով՝ վերաստուգելու և պահելու համար, և շրջանառութեան գանձարանը հարստացնելու համար ոսկէ գրամի ապահովութեամբ 25 միլիօն րուբլու թղթադրամ դուրս թողնել։

Երէկ ցերեկուայ ժամը 1½-ին նոցին Կայսերական Մեծութիւններն Օգոստափառ Որդոց հետ Պետերհոֆից Գանիա ուղևորուեցին։

Հրատարակուած է հրովարտակ, որով Ֆինլեանդիայի բնակիչների այն մասի համար, որ օգտւում է կայսրութիւնից տարած հացահատիկներով, պահպանւում է հաճարի, հաճարի ալիւրի և թեփերի անմաքս ազատ ներմուծում։ Ընդ նմին օգոստոսի 15/27-ից արգելւում է Ֆինլեանդիայից լիշեալ ապրանքների արտահանման արտահանելը, արգելումը զօրաժարելով այդ ապրանքներից նրանց վրայ, որոնց համար մինչև լիշեալ ամսաթիւը մաքսատնային արձակող թղթեր արուած չեն լինիլ։ Մինչև այս միջոցների բառնալը, դադարեցնում է 1865 թուի դեկտեմբերի 12-ին Ֆինլեանդիայում հացահատիկների ազատ առևտրի մասին եղած որոշման զօրութիւնը, որքան այդ վերաբերում է լիշեալ ապրանքների արտահանման արտահանելուն։

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան տեխնիքական բաժանմունքի նախագահ Մերքեձը խանդարուած առողջութեան համար բարձրագոյն հրամանով արձակուած է իր պաշտօնից։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

9 օգոստոսի

Լանդան 96.90 96.60, 96.85
Բերլին 47.45 47.½, 47.40.
Պարիզ 38, 17.½
Պօլուիմպերիալ . . . . . .
Մաքս. կուպօն . . . . . 7. 77 ք. գն.
Սթեմպ . . . . . ք. 156 կ. գն
Բօրսային դիս . . . . . 5% գն.
Պետական բանկի 5% տոմս.
1-ին շրջանի . . . . 104 ք. — կ. սակ.
2-րդ . . . . . 103 ք. 37 կ. ծախ
3-րդ . . . . . .
4-րդ . . . . . .
5-րդ . . . . . .
6-րդ . . . . . 120% ք. — կ. ծախ.
100 և 1000ր. արհեստական փոխառութեան. 5% տոմսեր.
1-ին շրջանի. . . . . .
2-րդ . . . . . 102 ք. 62 կ. ծախ.
3-րդ . . . . . 612½ ք. —կ. ծախ.
Առաջին 5% ներքին փոխառութեան. տոմսեր . . . . . 237 ք. — կ. սակ.
2-րդ . . . . . 227 ք. 37 կ. սակ.
Երրորդ փոխ. Սպին. հող. բանկի . . . . . 102 ք. 87 կ. ծախ.
5½% ընդհատ . . . . . ք. կ. սակ.
Թիֆ. քաղ. վարկի ընկեր.
օբլիգ. . . . . կ. սակ.
Բօրսային արամադրութիւնը խաղաղ է։

Պատասխանատու խմբ. Մ. ՍԲԵՂԵԱՆ

Հրատարակիչ՝ Ս. ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Պատուական «Նոր Դար»-ի № 113-ում քրանիկի բամնում մի անյայտ պարոն աչխատում է պաչտպանել Տող Գիւղի ուսուցիչ Մ. Պօղոսեանցին։

Թաղլարի դպրոցի հարցը Շուչում հետաքրքրել է միայն բանիմաց և ընթերցանութեամբ պարապող երիտասարդներին. դրանք են տեղական մի քանի վաճառականներ և գիւղական ու քաղաքի հայոց դպրոցների ուսուցիչները։ Վաճառականները պարապ չեն, ամեն օր գործ ունին, իսկ ուսուցիչները, որ լավ հնարավորութիւն է, առ այժմ ազատ ժամանակ են անցկացնում, ուստի ոչ ոք իրաւունք չունի նրանց «պարապ» և «անգործ» համարել, այլ միայն տհաս և աղայամիտ անհատներ կարող են այդպիսի անհեղի ածականներ չարել որ և է անձի վրայ։ Պ. Լրատուն գրում է.—«այդ հայոց կրթութեան գործին նախանձախնդիր պարոնները մեղադրում են նրան (Մ. Պօղոսեանցին) Շուչու գաւառի Թաղլար հայաբնակ գիւղի ուսումնարանին փակման համար, այն ինչ այդ ուսումնարանը ուսուցիչ Սմբատ Հովհաննոյի այդտեղից հեռանալուց, որ չորս հինգ տարի կը լինի, մինչև այժմ փակ է, էլ չբացվեց Պօղոսեանցը փակել տուեց»։ Այս խօսքերը հիմնովին տուեն. զարմանալի է, որ պ. Լրատուն չի ճանաչում փակ և բաց դպրոցները որոնք են, որովհետև 1886 թուից սկսած, այսինքն այն տարուանից, երբ հայոց բոլոր դպրոցները, տէրութեան հրամանով փակուելուց յետոյ, բացուել են, Թաղլարի դպրոցն էլ բացուել է և իր գոյութիւնը մինչև այսօր անխափան պահպանել է։

Ներկայ տարուայ փետրուար թէ մարտ ամիսներում, որպէս պատմում է Թաղլարի ժողովուրդը, ոմն Պօղոսեանց ազգանունով, որ Թաղլարի հարևան Տող գիւղում ուսուցիչ է, գալիս է Թաղլար մի ինչ որ թուղթ ձեռին, խնդրում է մի քանի մարդկանց ստորագրելու, ստորագրում են և ստորագրել տալիս չատերին. Դժբէի խնամը միայն մի քանի չարամիտ մարդկանց է յայտնի լինում և այդ պ. Պօղոսեանցին։ Անցնում է տա ժամանակ և յետոյ յայտնի է գիւղացիների մէջ թէ ինչ թղթի են ստորագրել. հարց-հրոց են բարձրացնում, ախր այս ինչ ենք արել, մենք դպրոց ունինք, որ հավիտ ենք կարողանում պահպանել, մենք ազատ ենք, երկրորդ դպրոց պահելու կարողութիւն չունինք, տներս կը քանդուի. խօսում են, վիճաբանում են իրար մէջ, բայց և գիւղական սովորութեան համաձայն ամեն մարդ իր գործին գնալով գործը քնում է։ Մայիս ամսին ես գնում եմ մեր դպրոցներին այցելելու, ի թիւս որոց և Թաղլարի դպրոցին։ Այդտեղ լինած պատմում են վերոյիչեալ գործի եղելութիւնը, հաւաքում է գիւղի ժողովուրդը և ես հարցնում եմ՝ համաձայն էք ձեր գիւղի եկեղեցական դպրոցը փակել և ուրիշը քանալ։ Ամենքը միաբերան ազաղակում են՝ ոչ, ոչ, մենք չենք իմացել թէ ինչ թղթի ենք ստորագրել...

Այստեղից պարզւում է, որ պ. Պօղոսեանցի մատրութիւնը բարութիւն չի եղել, այլ խափանել հայոց դպրոցի գոյութիւնը, ուրիշը բանալու ատիթով։ Նպատակը չատ պարզ է։ Պ. Լրատուն, ինչ են նչանակում ձեր այս խոսքերը... «աչխատել է ուսումնարանը բանալու համար ազբիւրներ որոշել, որի համար և աչխատած է պարոնը»։ Եթէ պ. Պօղոսեանցը դնացել է Թաղլար մեզ անյայտ փակուած դպրոցի փոխարէն ուրիշ նոր բացուելի դպրոցի համար ազբիւրներ որոշել, այդ միևնոյնը նա, եթէ քաջութիւն ունի և բարի սիրտ, կարող էր արդէն հաց դպրոցի համար անել և ոչ թէ գիւղացիների վրայ նոր բեռ բարդել։ Մինչ նրա խղճին դէմ չէ, որ տակաւին օգնութեան կարօտ մի խնճոյ դպրոցի վրայ բռունցքի հարուածներ տալով, նրան իսր անդունդն է գլորում... Այժմ դառնում եմ պ. լրատուին, խնդրելով հետեւեալը՝ հաստատել, որ Թաղլար գիւղի դպրոցը փակ է եղել, հաստատել որ պ. Պօղոսեանցի արարմունքը խղճմտանքի դէմ չէ, հաստատել թէ պ. Պօղոսեանցը ինչ մի բարութիւն և յիշատակելու գործ ունի կատարած, որպէս պի կարելի լինի նրա հասցէին ուղղած, ինչպէս դուք էք գրում, սուտ լուրերը փարատելու. Պ. լրատուն ասում է, թէ Պօղոսեանցի մասին սուտ լուրեր են տարածում և նրա հոգուն հակառակ գործունէութիւն են վերագրում նրան։ Պ. լրատու, յիշեցէք նրա հոգուն յարմար կատարած մի քանի գործեր, ապա պարծենկոտութեամբ նրան գովեցէք. այստեղ փաստեր են հարկաւոր, և ոչ բառեր։

Թեմական տեսուչ՝ Պատրս քահ. Տ. Յովհաննիսեան։

ՆԱԻԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

1 Սեպ. ծովի վրայ

Բաժումից գնում են՝

Հինգշաբթի՝ երեկոյեան 4 ժամին ուղիղ գծով, Նովոռոսիյսկ և Սոխում։

Շաբաթ՝ երեկոյեան 8 ժամին, ուղիղ գծով, բոլոր նաւահանգիստներով։

Երկուշաբթի՝ երեկոյեան 7 ժ. արտաւահմանեան նաւահանգիստներ. Կ. Պոլիս։

Բաժում գալիս են

Երեքշաբթի՝ կէս օրին մօտ, Օդեսայից, ուղիղ գծով։

Ուրբաթ՝ առաւօտեան Օդեսայից ուղիղ գծով, Կերչի և Նովոռոսիյսկի վրայով։

Կիրակի՝ առաւօտեան Կ. Պոլսից

Փոթիից Բաժում գնում են՝

Հինգշաբթի՝ առաւօտեան ժ. 9-ին։

Շաբաթ՝ առաւօտեան ժ. 9-ին։

Երեքշաբթի՝ երեկոյեան.

Փոթիից Բաժում գալիս են՝

Ուրբաթ և կիրակի կէս օրից յետոյ ժ. 2 ի մօտերքը։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ֊Ժ. Ի. Բ. ՏԵԼԵԱՖՈՒՆԻ

ՋՐԱԲՈՒԺԱՐԱՆ

Ամեն օր զանազան տաքութեան դուշեր

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան ժամը 8—10-ը։ Միքայէլեան փողոց, տ. № 84, հարցնել բժ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑԻՆ։

(169) 20—20

«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՄԵՂՔԵՐ»

իսրատական դրուած՝ ծանոլականութեամբ իրենց ջրային կաղմուածքը խանդարածների համար։

հեղ. Դ-ր Լօրէնց

առաւելն հրատարակութիւն Դ-ր Ռ-լիս Դինն է 1 րուբ.

Այս օգտակար գիրքը պարունակում է իր մէջ չատ խրատներ, թէ՝ ինչպէս կարող են ազատուել հիւանդները վերոյիչեալ ախտի վնասակար հետևանքներից և վերադանդնել խանդարուած ոյժերը և առողջութիւնը։ Այս գիրքը թարգմանուած է Մոսկայի գլխաւոր նահանգական կոմիտէից։

Հրատարակութեան պահանջ է Օտտօ Ասպերգէրէր Տօ Լայպցիգ (Otto Asperger Leipzig) (Սաքսոնիա)։ Օտարազգացիները ճանապարհածախս չեն վճարում։

(M.) 32—21

Վրաստանի և Իմերէթի հայոց Վիճակային Կոնսիստորիայի ատենի մէջ նշանակած է աճուրդ՝ի 15 Հոկտեմբերի սոյն ամի, առանց կրկնաճուրդի, կապալաւ տալու համար եկեղեցական գիւղերը Ախալքալաքայ գաւառի։

Անդամ Կոնսիստորիայի Դէորգ քահանայ Գալստեանց։

(190) 3—3.

«ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ խմբագրական մասնաժողովը սրանով յայտարարում է, որ տպագրութեան համար ընդունում են հետևեալ բովանդակութեան ինքնուրոյն և թարգմանական գրուածքներ.

1) ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ.

2) ԳԻՏՆԱԿԱՆ.—Զուտ գիտնական գրուածքներից կը տպագրուեն միայն այնպիսիները, որոնք վերաբերում են հայոց կեանքի հետազօտութեան, իսկ գիտութեան միւս ճիւղերից ժողովրդականացրած գրքեր։

3) ԴԱՍԱԳՐՔԵՐ. մանաւանդ ընդհանուր գրականութեան, ընդհանուր պատմութեան, հայոց գրականութեան, բնական պատմութեան և ֆիզիկայի ձեռնարկներ, կազմած մեր թեմական դպրոցների համար։

4) ՄԱՆԿԱԿԱՆ ընթերցանութեան համար։

5) ՆԻՒԹԵՐ—մեր ժողովրդի կեանքի ուսումնասիրութեան վերաբերեալ (աւանդութիւններ, երգեր, սովորութիւններ և այլն)։

Ծանօթ. Մանրամասն ծրագիրը վերոյիչեալ նիւթերի ժողովելու համար կը տպագրուի յետոյ։ Ընկերութեան խմբագրական մասնաժողովն իրան է վերապահում ներկայացած նիւթերից ընտրութիւն և քաղուածք անել, եթէ ուղարկողը նախօրօք որոշ պայմաններ չէ դնում։

Տպագրուած գրքերի համար վարձատրութիւն տրւում է մի տպագրական թերթին՝ ինքնուրոյն գրուածքների համար՝ 20—25 ր. իսկ թարգմանական գրուածքի համար՝ 15 20 ր.։ Բացառիկ դէպքերում վարձատրութիւնը կարող է և աւելի լինել խմբագրական մասնաժողովի հայեցողութեամբ։

Հասցէն.—Тифлисъ, Правленію Тифлисскаго Общества изданія армянскихъ книгъ.

(խմբ.) 3—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՈՒՄ

Նորեկ աշակերտների ընդունելութիւնն սկսուելու է օգոստոսի 20-ից։ Իւրաքանչիւր խնդրատու աշակերտ պէտք է անպատճառ ներկայացնէ իւր ծննդեան, ծաղկի և ուսման վկայականները։ Քննութիւնները և վերաքննութիւնները սկսուելու են օգոստոսի 26-ից հետևեալ կարգով.

Ք֊ն. 26-ին Կրօն, սր. պատմութիւն, Եկեղ. օսմար և Եկեղ. երգեցողութիւն.

Կ֊ն. 27-ին Հայոց լեզու և Հայոց պատմութիւն.

Ե֊ն. 28-ին Ռուսաց լեզու և Ռուսաց պատմութիւն.

Ե֊ն. 29-ին Ֆրանսիական լեզու և ընդհ. աշխարհագրութիւն.

Ո֊ՐԲ. 30-ին Թուաբանութիւն, Հանրահաշիւ, երկրաչափութիւն և տիեզերագրութիւն.

Հ֊ԲԹ. 31-ին Կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, բնախօսութիւն և նկարչութիւն։

Բացի նշանակեալ օրերից քննութիւններ լինելու չեն։

(184) 3—2.

ԸՍՏ ԿՏԱԿԻ ԲԱՐԵՑԻՃԱՏԱԿ ՅՈՎՍԷՓԱՅ ԻԶՄԻՐԵԱՆՑ

Կը հրաւիրուին այն հեղինակները որոնք՝ ազգային դպրութեան և պատմութեան վերաբերեալ որ և է աշխատութեամբ կը փափագին մասնակցել Սահակ Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութեան, որոնց աշխատութիւնները յուղարկել մինչև ներկայ տարւոյս Դեկտեմբեր ամսոյ վերջն առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն, ի Կ. Պոլիս։

Տպագրեալ աշխատութիւնք պէտք է որ երեք օրինակ յուղարկուին, իսկ ձեռագիր մի օրինակ, որք ետ չեն դարձուիր։

(0—0—0) 10—2

Въ тифлисскихъ книжн. магаз., въ Баку—у библіотекаря Армянск. человѣколюб. Общ. и у Тараева, а также на станціяхъ желѣзн. дорогъ продается

новая книга

«БАКУ И ЕГО ОКРЕСТНОСТИ»

Цѣна съ планомъ города—35 к.

Тамъ-же продаются:

Тифлисъ и его окрестности, съ планомъ и картой, цѣна 40 к.

Кахетія, съ картой; ц. 30 к.

Кавказъ, съ картой, втор. изд., цѣна I вып.—60 к., остальныхъ вып. отъ 15 до 20 к

Словарь кавказскихъ дѣятелей, ц. 25 к.

(фотх.) 4—4.

Дозволено цензурою. Тифлисъ, 12 го Августа 1891 г. Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр, д. Читахова